***667. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ** ըեմի ճակատի եզրին, վերից վար 1 տող.*

Ր
Ո
Գ
Ի
Ր
Ի
\+

ԳԻՐԻՔՈՐ

Ծանոթ. *Տառերի հերթականությունը չի պահպանվել*

## 66. ՆԱՄԶՈՐ ԳՅՈՒՂ

***668. ԳՅՈՒՂԱՄԻՋԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ** հյուսիսային պատին, արտաքուստ 1 տող*

Թվին. :ՌՃԿԶ:-ին (1717):

Ծանոթ. *Բարխուդարյանցն տնի շինության թվական :ՌՃԽԵ: (1696)։*

*Հրատ. Բարխուդարեանց, 63։*

## 67. ՍՊԻՏԱԿ ԽԱՉ ՎԱՆՔ

*Վանք և Հաղրութ գյուղերի արանքում, բարձրադիր մի հարթության վրա, գտնվում է Սպիտակ խաչ վանքը։ Այն ունի մի հասարակ եկեղեցի, որի արևմուտքում կա փոքր և բաց գավիթ։ Արևելյան պատին կից՝ թաղածածկ սենյակ-հյուրատուն. ընդարձակ բակում՝ խաչքարեր և տապանաքարեր։*

*Գոյության ունեցող շենքերը բոլորն էլ* XVII *դարի կառուցումներ են, բայց դրանց պատերի մեջ ագուցված հին տապանաքարերի ու խաչքարերի վրա եղած տապանագրությունները հասնում են մինչև* XIV *դարի առաջին կեսը, նույնը նաև բակում գտնվածների վրա. Նախկինում եկեղեցու մեջ գտնված մասունքների հետ կապված ավանդությունները ավելի հին են։*

***669. ԽԱՉՔԱՐ,** որմնափակ, դեղաքանդակ, գտնվում է բակի հարավային մասում, ճակտոնի տակի կիսակամար քարի վրա 6 տող.*

ԵՍԱՋԱՄԻՈՐԴԻԻՇԽԱՆԱՅԿԱՆԿ
ՆԵՅԻՋԽԱՀՍԻ:ԻՓՐԿՈՒԹԻ ՀՈԳ
ՈՅՈՐԴՈՅԻՄՈՅԱՍՈՒԴԱՐԱՅՈՐ
ՔԿԱՐԴԷՔՅԻՇԵՅԷՔԻՍՈՒՐԲՅՂ
ԱՒԹՍՁԵՐ ԱՂԱՀԵՄ:ԻԹՎ
ԻՍ:Չ:Ղ:Ե:

ես
հա
սա
ն.ո.

ԵՍ ԱՋԱՄԻ, ՈՐԴԻ ԻՇԽԱՆԱՑ, ԿԱՆԿ|-
ՆԵՑԻ ՋԽԱՋՍ[Ի] Ի ՓՐԿՈՒԹԻ ՀՈԳ|ՈՑ
ՈՐԴՈՑ ԻՄՈՑ ԱՍՈՒԴԱՐԱՑ. ՈՐ|Ք
ԿԱՐԴԷՔ ՑԻՇԵՑԷՔ Ի ՍՈՒՐԲ Ց(ԱՅ)Ղ(Ա)|-
ԱՒԹՍ ՋԵՐ ԱՂԱՋԵՄ: Ի ԹՎ|ԻՍ :ՉՂԵ:
(1346):

Ծանոթ. *Խաչքարն ընդգրկող երեք որմերի սրբատաշ քարերը պոկել-տարել են, նույնը և ճակտոնինը։ Խաչի հորիզոնական թևերի տակ քանդակված են հրեշտակներ։*

*Ջալալյանցն առաջին տողը կարդացել է* «Աբասի որդի իշխանն», *իսկ Բարխուդարյանցը անձնանունները գրել է փոքրատառով և թվականը՝ :ՁՂԷ: Հուշարձանը անվանել է «Բեմ»։*

*Հրատ. Ջալալեանց, II, 264։ Բարխուդարեանց, 67։*